ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--- հունիսի 2024 թվականի №--- -Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆՆ ՈՒ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2024 թվականի հունիսի 6-ի №Ե-1902-24 և հունիսի 13-ի №4223-2024 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ առկա վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման և (կամ) Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Ընկերության ներդրումային ծրագրերով նախատեսված կապիտալ ծախսերի իրականացման նպատակով, համեմատաբար ցածր և կայուն տոկոսադրույքով անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար, նախատեսում է թողարկել պարտատոմսեր, ինչից ելնելով՝ Ընկերության և «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության միջև ձեռք է բերվել Ընկերության կողմից թողարկվելիք պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացնելու համաձայնություն: Ուստի Ընկերությունը խնդրել է համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության տարածքում առավելագույնը 60 (վաթսուն) միլիոն ամերիկյան դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանը, և, տվյալ դեպքում, ծրագրային ազդագրի կիրառության ժամկետի՝ տասներկու ամիս լինելու հանգամանքով պայմանավորված, հայցել է նաև գործարքի կնքման համար սահմանել մեկ տարի ժամկետ,

բ) Ընկերության կողմից սույն որոշման նախաբանի «ա» կետում նշված պարտատոմսերի թողարկմանն ու տեղաբաշխմանը Հանձնաժողովի կողմից համաձայնություն տալը, «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ կետի

համաձայն, չի խախտում էներգետիկ համակարգի հուսալիությունը, անվտանգությունը և ներքին շուկայի սպառողների շահերը, Ընկերության ներկայացրած փաստաթղթերը և տեղեկատվությունը համապատասխանում են Հանձնաժողովի սահմանած կարգի պահանջներին, իսկ անհրաժեշտ փորձ ունենալու վերաբերյալ դրույթը տվյալ դեպքում կիրառելի չէ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում առավելագույնը 60 (վաթսուն) միլիոն ամերիկյան դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսերի թողարկմանը և դրանք «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից տեղաբաշխմանը՝ պայմանով, որ դրա արդյունքում ներգրավված ֆինանսական միջոցներն ամբողջությամբ ուղղվեն Ընկերության կողմից էներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեության իրականացման համար ստանձնած և առկա վարկային պարտավորությունների վերաֆինանսավորման և (կամ) Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Ընկերության ներդրումային ծրագրերով նախատեսված կապիտալ ծախսերի իրականացմանը:
2. Ընկերությանը՝

1) Հանձնաժողովի կողմից սահմանված կարգին և ձևերին համապատասխան վերջինիս ներկայացվող համապատասխան հաշվետվություններում (տեղեկատվության մեջ) հստակ ընդգծել վարկային պարտավորությունների այն վերաֆինանսավորումները և (կամ) Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Ընկերության ներդրումային ծրագրերով նախատեսված և կատարված կապիտալ այն ծախսերը, որոնք իրականացվել են սույն որոշման 1-ին կետում նշված պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման արդյունքում ներգրավված միջոցների հաշվին,
2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման ավարտից հետո երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է Հանձնաժողով ներկայացնել դրանց վերաբերյալ համապատասխան հիմնավորող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները):

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված պարտատոմսերի թողարկումն ու տեղաբաշխումը կարող են իրականացվել սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
--- հունիսի 2024թ.